Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2024 թվականի հունվարի 15-ի N 03-Ն հրամանի

ՀՀՇՆ 22-01-2024 «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԼԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

ՆԱԽԱԲԱՆ

Վերջին տասնամյակներում տեղի ունեցած կլիմայական փոփոխությունների հետևանքով անհրաժեշտություն առաջացավ վերանայել «ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմեր»-ում օգտագործված կլիմայական հարաչափերի հաշվարկները: Այսպես, ամենատաք երեք տարիները Հայաստանում դիտվել են 2010, 2018 և 2021 թվականներին: Ջերմաստիճանի բարձրացումը առավել արագ է տեղի ունենում ամռան սեզոնին, որն արտահայտվում է ջերմային ալիքների, և սաստիկ շոգերի հաճախականության զգալի աճով: Հայաստանում բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ 43,7°C, դիտվել է 2011թվականի հուլիսի 31-ին Մեղրիում, իսկ 2017թ. և 2018թ. ամռանը օդի առավելագույն ջերմաստիճանը Արարատյան դաշտում գերազանցել է 42°C-ը: Կլիմայական մոդելների կանխատեսումները վկայում են օդի ջերմաստիճանի շարունակական բարձրացման մասին մինչև 21-րդ դարի վերջ: Հաշվի առնելով կլիմայի փոփոխության ներկա միտումները՝ անհրաժեշտություն է առաջացել հաշվարկել ջեռուցման, օդափոխության և օդի լավորակման համակարգերի նախագծման համար կիրառվող կլիմայական հարաչափերը, որոնք թերի են ներկայացված եղել «ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմեր»-ում:

Սույն շինարարական կլիմայաբանության նորմերում վերանայվել են կլիմայական հարաչափերի հաշվարկները Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված 29 գործող օդերևութաբանական կայանների համար, որոնք

ներկայացված են Աղյուսակ 46-ում (1-29 կայանները): Այս կայանների երկարաժամկետ օդերևութաբանական դիտարկումները՝ ներառյալ 2020 թվականը, անցել են որակի ստուգում և բավարարում են տվյալների համասեռության պահանջներին:

1990-ական թվականներին զգալի թվով օդերևութաբանական կայանների և դիտակետերի փակվելու պատճառով, Հայաստանի Հանրապետության որոշ բնակավայրերի համար բացակայում են օդերևութաբանական հուսալի դիտարկումների շարքերը, հետևաբար այս բնակավայրերի կլիմայական հարաչափերի հաշվարկները ենթակա են արդիականացման: «ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմեր»-ում հրապարակված այս տվյալները առանձին աղյուսակների տեսքով վերահրապարակվել են սույն նորմերում և խորհուրդ է տրվում օգտագործել տվյալների բացակայության դեպքում:

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն շինարարական նորմերը սահմանում են կլիմայական հարաչափեր, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխության, օդի լավորակման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ:

2. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

2. Սույն նորմերում կիրառված են հետևյալ տերմիններն իրենց սահմանումներով.

1) **ապահովվածություն՝** կլիմայական հարաչափերի ինտեգրալ կրկնելիություն այդ հարաչափերի որոշակի սահմանից բարձր կամ ցածր արժեքների դեպքում,

2) **արդիականացման ենթակա հաշվարկներ՝** վերանայված շինարարական կլիմայաբանության մեջ վերահրապարակվել են «ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմեր»-ում ներկայացված այն կլիմայական հարաչափերը, որոնց վերահաշվարկը հնարավոր չի եղել իրականացնել հուսալի օդերևութաբանական դիտարկումների շարքերի բացակայության պատճառով,

3) **արեգակնային ճառագայթում՝** արևի էներգիա, որը ստանում է երկիրը էլեկտրամագնիսական ալիքների ձևով,

4) **արեգակնային ցրված ճառագայթում՝** արեգակնային ճառագայթման մաս, որն ընկնում է մակերևույթի վրա մթնոլորտում ցրվելուց հետո,

5) **արեգակնային ուղիղ ճառագայթում՝** արեգակնային ճառագայթման մաս, որն ընկնում է մակերևույթի վրա արեգակնային ուղիղ ճառագայթների ձևով,

6) **կլիմայական հարաչափեր՝** նախագծման համար օգտագործվող հաշվարկային կլիմայական նորմատիվներ,

7) **կլիմայական ցուցանիշներ՝** բազմամյա շարք ունեցող դիտարկումներից ստացված օդերևութաբանական տարրերի միջին մեծություններ,

8) **կլիմայական շրջանացում՝** հանրապետության առանձին շրջանների կլիմայական առանձնահատկությունները բնութագրող փաստաթուղթ (սովորաբար ներկայացվում է սխեմատիկ քարտեզի տեսքով),

9) **կրկնելիություն՝** տվյալ միջակայքի մեջ մտնող դեպքերի թվի հարաբերությունը շարքի անդամների ընդհանուր թվին,

10) **ձմռան սկիզբը, վերջը և տևողությունը՝** օդի բազմամյա միջին օրական ջերմաստիճանի կայուն անցումը 0˚C-ից ցածր համարվում է ձմռան սկիզբ, իսկ 0˚C-ից բարձր՝ ձմռան վերջ: Ջերմաստիճանի կայուն անցման ամսաթվերի միջև եղած տարբերությամբ որոշվում է ձմռան ժամանակահատվածի տևողությունը օրերով, որի ընթացքում օդի միջին օրական ջերմաստիճանը կայուն մնում է 0˚C-ից ցածր,

11) **մթնոլորտային տեղումներ՝** մթնոլորտից թափվող տարբեր ագրեգատային վիճակի ջրի մասնիկները (անձրև, կարկուտ, ձյուն), որոնք կազմում են ջրային շերտ երկրի մակերևույթի վրա,

12) **մթնոլորտային ճնշում՝** օդի սյան ճնշումը, որն ընկնում է միավոր մակերևույթի վրա, հՊա,

13) **ջեռուցման սկիզբը, վերջը և տևողությունը՝** ջեռուցման ժամանակահատվածը ընդգրկում է 8˚C-ին կամ 10˚C-ին հավասար և ցածր միջին օրական ջերմաստիճանով կայուն ժամանակահատվածը: Ջեռուցման ժամանակահատվածի տևողությունը որոշվում է այդ ժամանակահատվածի սկզբնական և վերջնական ամսաթվերի միջև ընկած օրերի թվով,

14) **տատանումներ՝** օդերևութաբանական տարրերի առավելագույն և նվազագույն մեծությունների միջև տարբերություններ,

15) **տաք և ցուրտ ժամանակահատվածներ**՝ ցուրտ է համարվում նոյեմբերից մարտ ընկած ժամանակահատվածը, իսկ տաք՝ ապրիլից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածը,

16) **քամի՝** վեկտորական մեծություն, որը բնութագրվում է միաժամանակ երկու գործոններով՝ քամու ուղղությամբ և նրա արագությամբ: Քամու արագության միավորն է մ/վ, իսկ ուղղությունը որոշվում է հորիզոնի շրջանի կողմնամասով (ռումբով),

17) **օդերևութաբանական տարրեր՝** արեգակնային ճառագայթում, օդի ջերմաստիճան, մթնոլորտային տեղումներ և ճնշում, օդի հարաբերական խոնավություն, քամի,

18) **օդերևութաբանական տարրերի էքստրեմալ մեծություններ**՝ դիտարկումների ողջ ժամանակաշրջանում գրանցված բացարձակ առավելագույն և նվազագույն մեծություններ,

19) **օդի ջերմաստիճան՝** միջավայրի ջերմային վիճակի չափանիշ, արտահայտված աստիճաններով, ˚C,

20) **օդի խոնավություն**՝ բացարձակ խոնավությունը բնութագրում է մեկ խորանարդ մետրում ջրային գոլորշու քանակը գ/մ^3: Հարաբերական խոնավությունը բնութագրում է ջրային գոլորշիներով օդի հագեցվածության աստիճանը, որը արտահայտված է տոկոսներով, %:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքը, ծովի մակարդակից բավականին բարձր գտնվելը, ցամաքային կլիման, բարդ և խիստ մասնատված ռելիեֆը պայմանավորում են հանրապետության բնակլիմայական պայմանների մեծ բազմազանությունը: Կլիմայական պայմանները և մեծ քաղաքների միկրոկլիման ազդում են շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմաստիճանային և խոնավության ռեժիմի վրա, պայմանավորում են կոնստրուկցիաների և շինությունների տարրերի վրա ֆիզիկական բեռնվածությունները, առաջացնում են շինարարական նյութերի և շինությունների կոռոզիա և ծերացում, դժվարացնում են շինարարական աշխատանքների կազմակերպումը:

4. Կլիմայական ցուցանիշները հաշվարկված են Հայաստանի Հանրապետության այն բնակավայրերի համար, որոնք ունեն օդերևութաբանական դիտարկումների բավականին երկար շարք (25-30 տարուց ոչ պակաս):

4. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՐԳ

5. Կլիմայական ցուցանիշների անվանակարգն ընդգրկում է օդի միջին և էքստրեմալ ջերմաստիճանները, ձմռան սկիզբը, վերջը և տևողությունը, ինչպես նաև ջեռուցման, տաք և ցուրտ ժամանակահատվածների կլիմայական հաշվարկային հարաչափերը: Ներկայացված են կլիմայական հարաչափեր աղյուսակային ձևաչափով, որոնք հիմնված են արդիականացման ենթակա տվյալների (հաշվարկների) վրա.

1) օդի միջին և էքստրեմալ ջերմաստիճանի մեծությունները, ձմռան սկիզբը և վերջը ներկայացված են աղյուսակներ 1-ից 9-ում,

2) օդի հարաբերական խոնավության արժեքները ներկայացված են աղյուսակներ 10 և 11-ում,

3) մթնոլորտային տեղումները ներկայացված են աղյուսակներ 12 և 13-ում,

4) ձյան ծածկույթի կլիմայական հարաչափերը ներկայացված են աղյուսակ 14-ում,

5) քամու տվյալները և հաշվարկային արագությունը ներկայացված են աղյուսակներ 15-ից 18-ում,

6) ջեռուցման ժամանակահատվածի սկիզբը, վերջը և էնթալպիան (ջերմապարունակությունը) ներկայացված են աղյուսակներ 19-ից 21-ում,

7) տարվա տաք և ցուրտ ժամանակահատվածների հաշվարկային կլիմայական հարաչափերը ներկայացված են աղյուսակներ 22-ից 28-ում,

8) արևափայլի և արեգակնային ճառագայթման հաշվարկային հարաչափերը տրված են աղյուսակներ 29-ից 44-ում, որոնք ամբողջովին վերահաշվարկվել են ակտինոմետրիական դիտարկումների 1991-2020թթ. ժամանակահատվածի փաստացի տվյալներով,

9) աղյուսակներում դատարկ վանդակների առկայությունը նշանակում է, որ տվյալ կլիմայական ցուցանիշը կամ դրա որոշակի արժեքները կիրառելի չեն՝ պայմանավորված կլիմայական պայմանների առանձնահատկություններով,

10) կլիմայական ցուցանիշների և հարաչափերի բացթողումները, պայմանավորված հաշվարկների համար անհրաժեշտ օդերևութաբանական դիտարկումների տվյալների բացակայությամբ, աղյուսակներում նշված են «-»-ով:

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

6. Շենքերը և շինությունները նախագծելիս հարկավոր է ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքի շինարարության համար մշակված կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզով: Կլիմայական շրջանացման քարտեզը կազմելիս գլխավոր չափանիշ է ընդունված հանրապետության տարածքի կլիմայի վերընթաց գոտիականությունը: Բոլոր կայաններին համապատասխան կլիմայական շրջանները ներկայացված են աղյուսակ 46-ի 4-րդ սյունակում:

6. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԱՉԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

7. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանների (°C) հաշվարկն իրականացվել է ջերմաստիճանի բազմամյա միջին արժեքների համասեռ շարքերի հիման վրա.

1) օրական միջին ջերմաստիճանների շարքերի համասեռությունն ապահովվել է Համաշխարհային Օդերևութաբանական Կազմակերպության մեթոդաբանության համաձայն,

2) օդի դիտված բացարձակ նվազագույն և առավելագույն ջերմաստիճանը (°C) բնութագրում է առավել ցածր/բարձր ջերմաստիճանը՝ գրանցված դիտարկումների ողջ ժամանակահատվածի ընթացքում,

3) օրերի միջին և առավելագույն թիվը տարբեր ջերմաստիճանային սահմաններում ցուրտ ժամանակահատվածի համար որոշվում է նվազագույն ջերմաչափի դիտարկումներով,

4) օրերի միջին և առավելագույն թիվը տարբեր ջերմաստիճանային սահմաններում տաք ժամանակահատվածի համար որոշվում է առավելագույն ջերմաչափի դիտարկումներով,

5) օդի էքստրեմալ ջերմաստիճանների (˚C) միջին արժեքները ըստ ամիսների ստացվել են յուրաքանչյուր տարվա դիտված ամսական նվազագույն/առավելագույն ջերմաստիճաններից,

6) էնթալպիայի (ջերմապարունակության) ամսական միջին արժեքները (կՋ/կգ) հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

$$J = c_p t + 0.622\left(L + c'_p t\right)\frac{RE_t}{p} + c_p r_{tR}\frac{\sigma_t}{\sigma_R} \qquad (1)\ \text{ուղղ.}$$

որտեղ՝

J - էնթալպիայի միջին արժեքն է (կՋ/կգ), t - օդի ջերմաստիճանը (˚C), p - մթնոլորտային ճնշումը (հՊա), R - օդի հարաբերական խոնավությունը (0-1), E_t – հագեցած գոլորշիների ճնշումն է օդի միջին ամսական ջերմաստիճանի պայմաններում (հՊա), $\frac{\sigma_t}{\sigma_R}$- օդի ջերմաստիճանի և օդի հարաբերական խոնավության միջին օրական արժեքների ստանդարտ շեղումների հարաբերությունը, r_{tR}-ը օդի ջերմաստիճանի և օդի հարաբերական խոնավության օրական արժեքների միջև կորելյացիայի գործակիցն է, c_p=1կՋ/կգ*Կ, c'_p=1.85 կՋ/կգ*Կ, L-ը գոլորշիացման տեսակարար ջերմությունն է 0˚C-ում՝ L=2507 կՋ/կգ,

7) առավել ցուրտ օրերի և ցուրտ հնգօրյակների օդի ջերմաստիճանի ապահովվածության հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով

$$P = 1 - \frac{m_{միջ} - 0{,}3}{n + 0{,}4} \qquad (2)\ \text{ուղղ.}$$

որտեղ՝

P - ապահովվածությունն է միավորի մասերով, $m_{միջ}$ – հաշվարկվող ապահովվածությանը համապատասխան կարգային համարն է դասակարգված շարքում՝ դասակարգելով ջերմաստիճանները նվազման կարգով, n – շարքի անդամների թիվն է, որը հավասար է մշակման ընդունված դիտարկումների տարիների թվին,

8) կառուցվում են առավել ցուրտ օրերի և ցուրտ հնգօրյակների օդի ջերմաստիճանի բաշխման ինտեգրալ կորերը ըստ բանաձև (2ուղղ.)-ի՝ կիրառելով անհամաչափ հաճախականության ցանցը: Գրաֆիկի օրդինատների առանցքի վրա օդի ջերմաստիճանի լոգարիթմական սանդղակն է, իսկ աբսցիսների առանցքի վրա՝

ապահովվածության կրկնակի լոգարիթմական սանդղակը: Համապատասխան ապահովվածության ջերմաստիճանների արժեքները դուրս են բերվում գրաֆիկից,

9) տաք ժամանակաշրջանի հաշվարկային ջերմաստիճանը ընդունված է որոշել 0.95 և 0.99 ապահովվածությամբ՝ կիրառելով նախորդ կետում ներկայացված մեթոդաբանությունը, սակայն այս դեպքում ջերմաստիճանները դասակարգվում են աճման կարգով,

10) օդի ջերմաստիճանի միջին օրական տատանումը հաշվարկում է որպես տարբերություն օդի միջին առավելագույն և միջին նվազագույն օրական ջերմաստիճանների միջև,

11) օդի էքստրեմալ ջերմաստիճանների գնահատման մեթոդաբանության նկարագրությունը՝

ա. հաշվարկված տվյալները ստացվում են տարեկան արժեքներից դիտարկումների ողջ ժամանակաշրջանի համար

բ. մեթոդ 1 (P)՝ ապահովվածության հաշվարկ՝ օգտագործելով հետևյալ բանաձևը՝

$$P = \frac{m}{n+1}100 \qquad (3),$$ ուղղ.

որտեղ *m* - հաշվարկվող ապահովվածությանը համապատասխան կարգային համարն է դասակարգված կլիմայական շարքում

գ. մեթոդ 2՝ Գումբելի մեթոդ՝

$$F(x) = \exp(-\mathrm{e}^{-y}) \qquad (4),$$ ուղղ.

դ. վերջնական արժեքը ստացվում է երկու մեթոդների արդյունքների միջինացման միջոցով,

12) օդի միջին ամսական հարաբերական խոնավությունը (%) հաշվարկում են ցերեկային դիտարկումներով (հիմնականում ժամը 15:00-ին),

13) ցուրտ (նոյեմբեր-մարտ) և տաք (ապրիլ-հոկտեմբեր) ժամանակահատվածի տեղումների քանակը հաշվարկում են որպես բազմամյա միջին ամսական տեղումների քանակի գումար,

14) տեղումների օրական առավելագույնը ընտրվում է ամենօրյա դիտարկումներից և բնութագրում է օրվա ընթացքում դիտված տեղումների առավելագույն քանակը բազմամյա տարիների շարքում,

15) գրունտի սառչման առավելագույն խորությունը (հողի մեջ 0˚C ջերմության թափանցման խորությունը) որոշվում է դիտարկումների նախնական մշակման

ընթացքում երկու մակարդակների միջև ջերմաստիճանների գծային միջարկումով, որոնց վրա նշված են 0˚C ջերմաստիճանին մոտ մեծությունները,

16) ուժեղ քամիներով օրերի քանակը հաշվարկվում է քամու օրական առավելագույն պոռթկումի տվյալներից: Ուժեղ քամիներով օրեր են համարվում այն օրերը, երբ առավելագույն պոռթկումը 15 մ/վ և ավելի է,

17) արևափայլի տևողությունը (ժ) և անարև օրերի քանակը (օր) հաշվարկվում են արևափայլի տևողության բազմամյա միջին ամսական և տարեկան արժեքներից, որոնք ստացվել են դիտարկումների շարքերի տվյալների միջինացմամբ: Օրը համարվում է անարև, երբ ամբողջ օրվա ընթացքում արևափայլ չի դիտվել,

18) ուղիղ և ցրված արեգակնային ճառագայթման հաշվարկները իրականացվել են համաձայն Ռուսաստանի Դաշնության կողմից մշակված և հաստատված մեթոդաբանության, որը կիրառվել է Ռուսաստանի Դաշնության շինարարական կլիմայաբանության մշակման, ինչպես նաև արեգակնային հաշվեկշռի հաշվարկների և կիրառական կլիմայաբանության այլ խնդիրների լուծման նպատակներով: Հաշվարկներում օգտագործվել են 1991-2020 թթ. ժամանակահատվածի ակտինոմետրիական դիտարկումների փաստացի տվյալները:

ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ, ՁՄՌԱՆ ՍԿԻԶԲԸ, ՎԵՐՋԸ

Աղյուսակ 1 **Օդի միջին ջերմաստիճան**

Բնակավայրի անվանումը	**Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, ˚C**												**Միջին տարեկան, ˚C**	**Բացարձակ նվազագույն, ˚C**	**Բացարձակ առավելագույն, ˚C**
	Հունվար	**Փետրվար**	**Մարտ**	**Ապրիլ**	**Մայիս**	**Հունիս**	**Հուլիս**	**Օգոստոս**	**Սեպտեմբեր**	**Հոկտեմբեր**	**Նոյեմբեր**	**Դեկտեմբեր**			
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**	**13**	**14**	**15**	**16**
1. Ամասիա	-8.6	-7.3	-2.8	4.0	9.2	13.0	16.4	16.7	12.8	7.0	0.5	-5.7	4.6	-31.1	34.6
2. Աշտարակ	-3.2	-0.1	5.8	11.7	16.5	21.5	25.2	25.2	20.5	13.6	6.2	-0.2	11.9	-24.5	41.2
3. Ապարան	-8.6	-7.3	-2.5	4.6	9.7	13.5	17.0	17.0	12.9	6.9	0.5	-5.6	4.8	-34.2	33.4
4. Արարատ	-3.1	0.2	6.9	13.4	18.1	22.6	26.4	26.0	21.1	13.8	6.2	0.0	12.6	-31.6	42.6
5. Արթիկ	-7.0	-5.7	-0.8	6.0	10.9	14.7	18.3	18.4	14.4	8.4	1.9	-4.2	6.3	-26.3	35.9
6. Արմավիր	-4.1	-1.3	5.4	12.5	17.4	21.9	25.8	25.3	20.2	13.0	5.7	-0.8	11.8	-31.4	41.5
7. Արտաշատ	-3.5	-0.5	6.0	12.8	17.5	21.8	25.5	24.9	20.0	13.1	6.0	-0.4	11.9	-28.9	42.6

1 աղյուսակի շարունակություն

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
8. Գավառ	-7.3	-6.2	-2.0	4.2	9.1	12.8	15.9	15.9	12.2	6.9	0.7	-4.6	4.8	-33.0	34.1
9. Գյումրի	-8.5	-6.8	0.0	7.0	11.7	16.0	19.9	19.8	15.6	9.0	1.8	-4.9	6.7	-36.0	38.0
10. Գորիս	-0.5	0.1	3.0	8.4	12.9	16.5	19.2	18.8	14.9	10.1	5.4	1.5	9.2	-20.4	35.4
11. Դիլիջան	-1.4	-0.7	2.5	7.8	12.1	15.5	18.5	18.3	14.4	9.4	4.4	0.4	8.4	-22.8	38.1
12. Եղվարդ	-4.9	-2.8	2.7	9.4	14.4	18.9	22.8	22.8	18.6	11.8	4.8	-1.7	9.7	-32.6	38.7
13. Երևան «Ագրո»	-3.8	-0.8	5.6	12.2	17.2	21.9	25.8	25.6	20.9	13.6	5.9	-0.7	12.0	-30.1	41.6
14. Երևան «Արաբկիր»	-2.7	-0.2	5.8	11.9	16.6	21.3	24.9	24.7	20.4	13.7	6.6	0.2	11.9	-20.6	41.9
15. Թալին	-5.7	-4.1	1.0	7.5	12.3	16.7	20.8	21.0	16.7	10.2	3.3	-2.9	8.1	-26.1	37.5
16. Իջևան	1.1	1.9	5.2	10.5	15.0	18.8	21.9	21.8	17.6	12.1	6.8	3.0	11.3	-18.5	39.0
17. Ծաղկահովիտ	-8.4	-7.5	-2.8	3.5	8.3	12.1	15.1	15.1	11.3	5.8	-0.7	-5.9	3.8	-31.0	33.0
18. Կապան	0.8	2.4	5.9	11.5	16.3	20.6	23.7	23.1	18.9	13.1	7.3	2.6	12.2	-22.1	42.4
19. Հրազդան	-7.8	-6.1	-1.5	5.2	10.3	14.1	17.4	17.4	13.7	7.6	1.3	-4.8	5.6	-31.5	35.0
20. Մարտունի	-5.2	-4.9	-1.3	5.0	9.8	13.4	16.4	16.3	13.2	8.4	2.5	-2.6	5.9	-31.7	33.6

1 աղյուսակի շարունակություն

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
21. Մեղրի	1.7	3.8	8.5	14.1	19.0	23.5	26.5	26.0	21.6	15.5	9.4	4.2	14.5	-18.0	43.7
22. Ջերմուկ	-7.2	-6.0	-2.1	3.7	8.8	13.0	16.3	16.5	12.9	6.7	0.4	-4.7	4.9	-30.0	33.8
23. Սևան լճային	-5.3	-5.0	-1.7	4.0	8.7	12.9	16.1	16.3	13.1	8.2	2.4	-2.7	5.6	-32.5	32.9
24. Սիսիան	-4.3	-2.8	1.2	6.8	11.5	15.2	18.1	17.9	14.1	8.6	2.7	-2.2	7.2	-34.4	36.2
25. Ստեփանավան	-3.6	-2.5	1.1	6.9	11.4	14.6	17.5	17.3	13.7	8.7	3.1	-1.5	7.2	-30.7	36.8
26. Վանաձոր	-2.5	-1.7	2.6	8.0	12.3	15.8	18.7	18.4	14.9	9.5	4.0	-0.3	8.3	-29.8	37.0
27. Տաշիր	-4.6	-3.7	0.0	5.9	10.3	13.7	16.4	16.1	12.4	7.6	2.1	-2.3	6.2	-34.1	34.6
28. Քաջարան	-3.0	-2.7	0.8	6.3	10.4	14.6	17.2	16.9	13.6	8.3	2.8	-1.4	7.0	-24.0	35.0
29. Ֆանտան	-6.1	-4.7	-0.4	5.9	10.8	14.7	18.0	18.3	14.8	8.9	2.4	-3.5	6.6	-23.1	35.5

Աղյուսակ 2 **Օդի միջին ջերմաստիճան** (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	**Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, ˚C**												**Միջին տարեկան, ˚C**	**Բացարձակ նվազագույն, ˚C**	**Բացարձակ առավելագույն, ˚C**
	Հունվար	**Փետրվար**	**Մարտ**	**Ապրիլ**	**Մայիս**	**Հունիս**	**Հուլիս**	**Օգոստոս**	**Սեպտեմբեր**	**Հոկտեմբեր**	**Նոյեմբեր**	**Դեկտեմբեր**			
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**	**13**	**14**	**15**	**16**
1. Ալավերդի	1.8	3.2	6.2	11.7	16.4	19.3	22.8	22.9	18.9	12.7	7.8	3.6	12.3	-17	37
2. Ամբերդ	-7.2	-6.0	-2.1	4.4	9.6	13.8	18.0	18.2	14.0	7.7	1.2	-4.6	5.6	-25	32
3. Այգեհովիտ	0.3	1.6	5.5	11.1	16.0	19.6	23.2	22.9	18.7	12.8	7.1	2.2	11.8	-19	41
4. Այգեձոր	0.4	1.2	4.4	10.1	14.6	18.0	21.4	21.3	17.3	11.9	6.8	2.4	10.8	-18	39
5. Անանուն լեռնանցք	-6.8	-6.0	-2.0	4.2	9.2	13.8	18.0	18.2	14.1	7.7	1.3	-4.1	5.6	-25	34
6. Աշոցք	-11.6	-10.8	-5.5	2.3	7.8	11.0	14.4	14.1	10.3	4.4	-1.3	-8.2	2.2	-42	34
7. Արագած բարձր-լեռնային	-12.6	-12.2	-9.8	-5.0	-0.5	3.9	8.8	9.2	5.1	-0.8	-6.2	-11	-2.6	-34	21
8. Արագած երկաթգծային	-5.9	-3.8	1.7	9.3	14.3	18.6	22.7	22.7	18.5	11.5	4.4	-2.6	9.3	-27	39

2 աղյուսակի շարունակություն (արդիականացման ենթակա)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
9. Արենի	-2.6	-0.1	5.7	12.1	17.1	21.9	26.1	25.9	21.1	13.9	6.7	0.1	12.3	-24	42
10. Արզնի	-4.5	-2.5	2.8	9.5	14.2	18.7	22.3	22.3	18.2	11.5	4.9	-1.3	9.7	-28	38
11. Բագրատաշեն	0.3	1.7	5.6	11.6	16.5	20.1	23.1	22.6	18.3	12.4	6.7	2.2	11.8	-21	42
12. Բերդ	0.5	0.9	4.5	10.5	15.6	19.1	22.3	21.4	17.4	11.6	6.8	2.7	11.1	-17	38
13. Գառնի	-4.9	-3.2	2.1	8.9	13.8	18.1	22.0	21.5	17.2	10.5	4.2	-2.2	9.0	-30	38
14. Գառնահովիտ	-7.2	-6.5	-3.3	3.2	8.5	12.2	16.1	16.5	12.6	6.3	0.8	-4.6	4.6	-25	30
15. Գեղաձոր	-7.4	-6.8	-3.0	3.3	7.9	11.4	14.6	14.5	11.7	6.1	-0.1	-5.1	3.9	-24	30
16. Գեղի	-1.1	-0.2	2.3	7.5	12.0	15.3	17.8	18.3	14.7	9.8	4.7	0.4	8.5	-22	34
17. Գյուլագարակ	-2.8	-2.3	0.9	6.5	10.9	13.8	16.5	16.9	13.1	8.5	3.6	-0.4	7.1	-23	35
18. Գորայք	-9.2	-7.6	-4.4	2.5	8.5	11.6	14.3	14.2	10.9	5.6	-0.6	-6.3	3.3	-36	31
19. Եղեգնաձոր	-3.3	-1.6	4.0	10.2	15.0	19.8	23.9	23.8	19.5	12.5	5.8	-0.2	10.8	-30	39
20. Եռաթմբեր	-12.7	-12.7	-10.0	-4.5	0.3	4.7	8.9	8.8	5.4	-0.9	-6.3	-11	-2.5	-35	23
21. Երասխ	-3.4	-0.5	6.4	13.5	18.2	22.6	26.6	26.1	21.4	13.9	6.6	-0.3	12.6	-28	42
22. Երևան «Զվարթնոց»	-3.7	-1.3	5.9	13.1	17.5	22.2	26.3	25.8	20.7	13.3	5.9	-0.2	12.1	-30	42

2 աղյուսակի շարունակություն (արդիականացման ենթակա)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
23. Երևան «Էրեբունի»	-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-28	42
24. Էջմիածին	-3.7	-1.2	5.1	12.2	17.1	21.2	25.2	25.1	20.1	13.0	6.1	-0.4	11.7	-31	41
25. Թումանյան	-2.2	-0.7	2.5	7.7	11.8	14.9	17.9	18.1	14.5	9.9	5.1	-0.4	8.3	-22	36
26. Լերմոնտովո	-5.1	-4.4	-1.3	5.0	9.4	12.4	15.1	14.7	11.5	7.1	2.2	-2.6	5.3	-23	34
27. Կաթնառատ	-3.2	-3.0	0.0	5.8	10.2	13.3	16.1	16.1	12.6	8.1	2.8	-1.2	6.5	-30	33
28. Կողբ	-0.1	1.1	4.2	10.0	15.0	18.5	21.9	21.6	17.3	11.7	6.4	2.2	10.8	-19	38
29. Հանքավան	-7.6	-6.6	-3.0	3.6	8.5	11.4	14.8	15.0	11.1	5.9	0.6	-4.8	4.1	-29	32
30. Հարթագյուղ	-7.0	-6.0	-1.9	4.7	9.2	12.7	16.0	16.0	12.5	7.0	1.1	-4.4	5.0	-24	35
31. Աբովյան (Ձաք)	-4.5	-2.9	2.6	9.1	13.9	18.6	22.1	22.4	18.1	11.5	4.8	-1.3	9.5	-20	38
32. Ճամբարակ	-5.1	-4.5	-1.6	4.4	9.0	11.9	14.5	14.3	11.1	6.5	1.9	-2.8	5.0	-28	33
33. Մայակովսկի	-5.3	-3.7	2.1	8.8	13.5	18.0	21.7	21.1	16.7	10.2	3.9	-2.3	8.7	-23	36
34. Մասրիկ	-8.5	-7.9	-3.1	4.2	9.4	12.9	16.2	16.0	12.5	6.7	0.6	-5.9	4.4	-38	34
35. Մարալիկ	-8.3	-6.9	-1.5	5.7	10.4	13.9	17.5	17.7	13.8	7.7	1.6	-5.0	5.6	-26	34
36. Մարտիրոս	-5.4	-4.1	-0.6	5.5	10.7	14.9	18.7	18.9	15.2	9.2	2.9	-2.6	6.9	-23	37

2 աղյուսակի շարունակություն (արդիականացման ենթակա)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
37. Մեծավան	-3.0	-3.2	-0.1	5.7	10.1	13.1	16.2	16.3	12.5	7.9	2.9	-1.5	6.4	-25	33
38. Վարդենյանց լեռնանցք	-8.5	-7.8	-4.7	1.5	6.9	10.5	14.0	14.3	10.8	5.2	-0.6	-6.1	3.0	-30	30
39. Նորատուս	-5.5	-5.6	-2.2	3.9	8.9	12.6	16.1	16.2	12.9	7.6	1.9	-3.3	5.3	-28	30
40. Շամիրամ	-4.3	-2.2	3.5	10.6	15.4	19.6	24.1	24.1	19.0	12.2	5.0	-1.5	10.5	-27	39
41. Շնող	0.7	1.9	5.1	11.0	15.7	19.2	22.7	22.5	18.0	12.3	7.1	2.7	11.6	-17	40
42. Շորժա	-4.6	-4.6	-1.7	4.4	9.4	13.2	16.6	16.9	13.7	8.5	3.1	-1.9	6.1	-32	34
43. Որոտանի լեռնանցք	-8.6	-7.9	-4.4	1.3	6.4	10.4	13.3	13.4	10.7	5.2	-0.9	-6.2	2.7	-28	30
44. Պաղակն	-11.9	-10.8	-6.2	1.9	7.9	11.0	14.3	14.2	10.3	4.5	-1.1	-8.5	2.1	-42	31
45. Պուշկինի լեռնանցք	-6.6	-6.2	-2.8	2.9	7.4	10.1	13.2	12.7	10.0	5.4	0.9	-4.1	3.6	-24	29
46. Ջաջուռ	-7.9	-6.5	-2.1	5.0	10.1	13.4	16.9	17.2	13.4	7.7	1.6	-4.8	5.3	-27	34
47. Ջրվեժ	-4.5	-3.5	2.2	9.1	13.8	18.0	22.1	22.2	17.9	10.8	3.9	-2.5	9.1	-31	40
48. Սեմյոնովկա	-7.4	-7.1	-4.0	2.4	7.3	10.4	13.3	13.3	10.0	5.6	0.3	-4.8	3.3	-26	33
49. Սևան քաղաք	-8.2	-7.4	-3.3	3.5	8.8	12.1	15.7	15.7	12.2	6.4	0.6	-5.5	4.2	-33	32

2 աղյուսակի շարունակություն (արդիականացման ենթակա)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
50. Սևքար	0.3	1.1	4.1	9.8	14.5	18.0	21.7	21.6	17.4	11.9	6.6	2.6	10.8	-17	38
51. Սիսիանի լեռնանցք	-8.2	-7.5	-4.3	1.3	6.3	9.9	12.7	12.8	9.9	4.7	-1.0	-5.9	2.6	-26	31
52. Սպիտակ	-4.4	-3.4	0.4	6.7	11.5	14.6	17.6	17.9	14.2	9.0	3.3	-1.9	7.1	-25	36
53. Վայք	-4.0	-2.2	3.5	10.2	15.0	19.7	23.5	23.4	19.0	12.0	5.6	-0.9	10.4	-20	39
54. Վարդենիս	-8.3	-6.8	-2.7	4.1	9.5	12.9	16.3	16.1	12.2	6.7	0.9	-5.1	4.7	-29	30
55. Վեդի	-2.6	0.2	6.7	12.7	18.1	22.0	26.7	26.6	22.8	15.5	7.6	0.2	13.0	-26	42
56. Վերին Խոտանան	-0.2	0.2	2.4	7.9	12.9	16.3	19.2	18.8	14.5	10.2	5.7	2.1	9.2	-18	33
57. Ուռուտ	-4.0	-2.8	0.5	6.4	10.9	13.8	16.4	16.5	13.0	8.6	3.2	-1.3	6.8	-29	35
58. Ուրցաձոր	-3.4	-1.0	5.3	12.1	16.6	20.8	24.7	24.6	20.0	13.4	6.2	-0.4	11.6	-23	41
59. Քարակերտ	-4.2	-2.6	3.7	11.1	16.1	20.4	24.7	24.5	19.9	13.4	5.8	-0.9	11.0	-28	40
60. Քուչակ	-8.6	-7.3	-3.2	4.3	9.9	13.9	17.5	18.2	14.5	7.6	1.0	-5.3	5.2	-30	30
70. Օձուն	-1.0	-0.4	2.9	8.5	13.0	16.2	19.3	18.9	15.2	9.8	5.3	1.2	9.1	-24	37

Աղյուսակ 3 **Օդի միջին առավելագույն (մ.ա.) և միջին նվազագույն (մ.ն.) ջերմաստիճանը**

Բնակավայրի անվանումը	**մ.ա./ մ.ն.**	**ըստ ամիսների, ˚C**												**Տարեկան**
		Հունվար	**Փետրվար**	**Մարտ**	**Ապրիլ**	**Մայիս**	**Հունիս**	**Հուլիս**	**Օգոստոս**	**Սեպտեմբեր**	**Հոկտեմբեր**	**Նոյեմբեր**	**Դեկտեմբեր**	
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**	**13**	**14**	**15**
1. Ամասիա	մ.ա.	-3.7	-2.1	2.3	9.5	15.2	19.3	22.9	23.6	19.9	13.1	5.5	-1.2	10.4
	մ.ն.	-12.8	-11.7	-7.1	-0.3	4.3	7.8	11.2	11.0	6.8	1.6	-3.4	-9.4	-0.2
2. Աշտարակ	մ.ա.	1.2	4.8	11.2	17.6	23.1	28.8	32.5	32.6	27.8	20.1	11.7	4.0	17.9
	մ.ն.	-6.6	-3.9	1.3	6.5	10.7	15.2	18.8	18.7	14.2	8.3	2.0	-3.4	6.8
3. Ապարան	մ.ա.	-3.0	-1.7	2.8	10.0	15.8	20.0	23.9	24.3	20.4	13.7	6.3	-0.3	11.0
	մ.ն.	-13.6	-12.5	-7.5	-0.3	4.0	6.9	10.3	9.9	5.6	1.0	-4.3	-10.3	-0.9
4. Արարատ	մ.ա.	2.1	6.0	13.5	20.1	25.1	30.2	33.7	33.5	29.0	21.8	13.3	5.1	19.5
	մ.ն.	-7.0	-4.5	1.2	7.2	11.7	15.9	19.5	18.8	13.7	7.2	0.9	-3.9	6.7
5. Արթիկ	մ.ա.	-2.1	-0.8	4.4	12.1	17.1	21.4	25.4	26.1	22.0	15.0	7.4	0.6	12.4
	մ.ն.	-10.5	-9.4	-4.6	1.6	5.9	8.9	12.3	12.3	8.3	3.4	-1.7	-7.2	1.6

3 աղյուսակի շարունակություն

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
6. Արմավիր	մ.ա.	1.4	4.8	12.0	19.4	24.5	29.4	33.4	33.1	28.5	21.0	12.5	4.4	18.7
	մ.ն.	-8.4	-6.1	-0.4	5.8	10.6	14.3	17.8	16.9	11.7	5.9	0.5	-4.8	5.3
7. Արտաշատ	մ.ա.	1.9	5.6	13.0	19.9	24.8	29.7	33.4	33.1	28.8	21.5	13.1	5.0	19.1
	մ.ն.	-7.1	-4.7	0.6	6.6	10.9	14.4	18.1	17.1	12.2	6.4	0.9	-3.9	6.0
8. Գավառ	մ.ա.	-0.8	-0.2	3.4	10.1	15.4	19.3	22.3	22.8	19.6	13.7	7.1	1.8	11.2
	մ.ն.	-12.2	-11.5	-6.8	-0.7	3.3	6.1	9.3	8.9	5.1	0.6	-4.4	-9.6	-1.0
9. Գյումրի	մ.ա.	-2.7	-0.8	5.9	13.8	18.7	23.3	27.1	27.5	23.8	16.7	8.5	0.6	13.5
	մ.ն.	-13.6	-12.3	-5.4	0.9	5.4	9.1	13.1	12.9	7.9	2.0	-3.8	-9.5	0.5
10. Գորիս	մ.ա.	5.2	5.6	8.4	13.8	18.2	21.9	24.8	24.7	20.7	15.9	10.9	7.2	14.8
	մ.ն.	-4.3	-3.7	-1.0	4.1	8.2	11.6	14.1	13.6	10.1	5.6	1.3	-2.3	4.8
11. Դիլիջան	մ.ա.	4.9	5.5	9.1	14.8	19.1	22.4	24.8	25.0	21.3	16.7	11.0	6.7	15.1
	մ.ն.	-5.7	-5.2	-2.3	2.5	6.5	9.8	13.0	12.5	9.1	4.3	0.0	-3.8	3.4

3 աղյուսակի շարունակություն

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
12. Եղվարդ	մ.ա.	0.1	2.3	7.9	15.3	20.6	26.0	30.0	30.3	25.5	18.0	10.1	3.0	15.8
	մ.ն.	-8.6	-7.1	-1.4	4.6	9.2	13.3	17.3	17.3	13.1	7.1	0.7	-4.6	5.1
13. Երևան «Ագրո»	մ.ա.	1.4	5.0	12.1	18.9	24.1	29.2	33.0	32.8	28.3	20.7	12.3	4.2	18.5
	մ.ն.	-8.4	-5.6	0.3	6.6	11.3	15.6	19.9	19.6	14.3	7.3	0.6	-4.7	6.4
14. Երևան «Արաբկիր»	մ.ա.	1.0	4.3	11.1	17.9	23.1	28.5	32.4	32.1	27.5	19.9	11.5	3.7	17.7
	մ.ն.	-5.4	-3.3	1.8	7.3	11.4	15.4	19.1	18.8	14.4	8.9	3.0	-2.3	7.4
15. Թալին	մ.ա.	-1.2	0.5	5.6	12.7	17.9	23.2	27.5	27.7	23.1	15.7	8.0	1.1	13.5
	մ.ն.	-9.2	-7.8	-2.8	3.0	7.3	10.8	14.4	14.6	10.6	5.4	-0.4	-6.1	3.3
16. Իջևան	մ.ա.	6.2	6.8	10.6	16.3	20.8	25.0	28.2	28.1	23.4	17.5	11.7	7.9	16.9
	մ.ն.	-2.4	-1.8	1.1	6.1	10.5	13.9	17.0	16.8	13.3	8.2	3.4	-0.5	7.1
17. Ծաղկահովիտ	մ.ա.	-2.6	-1.4	2.9	9.5	14.8	19.1	22.4	23.3	19.4	12.8	5.6	-0.3	10.5
	մ.ն.	-13.3	-12.6	-7.4	-1.2	2.8	5.8	8.7	8.4	4.4	0.4	-5.1	-10.5	-1.6
18. Կապան	մ.ա.	8.1	9.4	12.6	18.1	22.8	27.2	30.3	30.0	25.4	19.8	14.2	9.9	19.0
	մ.ն.	-4.1	-2.5	0.8	5.8	10.4	14.0	16.9	16.5	13.2	7.8	2.5	-2.1	6.6

3 աղյուսակի շարունակություն

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
19. Հրազդան	մ.ա.	-2.8	-1.0	3.5	10.9	16.8	20.9	24.0	24.7	21.5	14.6	6.8	-0.1	11.6
	մ.ն.	-12.0	-10.5	-6.0	0.4	4.9	8.1	11.7	11.5	7.4	2.0	-3.0	-8.6	0.5
20. Մարտունի	մ.ա.	-0.7	-0.1	3.6	10.4	15.6	19.4	22.1	22.2	19.4	13.9	7.2	1.7	11.2
	մ.ն.	-8.8	-8.9	-5.3	0.5	4.7	7.8	10.9	10.6	7.3	3.4	-1.4	-6.1	1.2
21. Մեղրի	մ.ա.	6.2	8.8	14.3	20.6	25.6	29.4	31.8	31.4	27.6	22.0	14.9	8.6	20.1
	մ.ն.	-1.2	0.3	4.1	8.9	13.3	17.6	21.0	20.5	16.1	10.2	5.4	1.2	9.8
22. Ջերմուկ	մ.ա.	-1.2	-0.2	3.7	9.4	15.1	19.6	23.2	24.2	20.8	13.8	6.3	0.9	11.3
	մ.ն.	-11.2	-10.2	-5.8	-0.4	3.7	7.2	10.6	10.4	6.5	1.6	-3.7	-8.4	0.0
23. Սևան լճային	մ.ա.	-1.8	-1.0	2.9	9.4	14.3	18.4	20.8	21.1	18.6	13.2	6.4	0.6	10.2
	մ.ն.	-7.8	-8.0	-4.5	0.7	5.2	9.5	13.0	13.0	9.4	4.5	-0.7	-5.3	2.4
24. Սիսիան	մ.ա.	1.9	3.1	7.0	13.2	18.3	21.9	24.6	24.9	21.7	16.4	9.7	4.2	13.9
	մ.ն.	-9.6	-8.0	-3.9	1.1	5.3	8.4	11.3	10.7	7.3	2.2	-2.8	-7.3	1.2
25. Ստեփանավան	մ.ա.	2.8	3.7	7.2	13.5	18.1	21.3	23.6	24.1	20.9	16.2	9.7	4.7	13.8
	մ.ն.	-8.6	-7.6	-3.9	1.6	5.8	8.9	11.9	11.5	7.9	3.2	-1.7	-6.4	1.9

3 աղյուսակի շարունակություն

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
26. Վանաձոր	մ.ա.	2.9	4.0	8.8	14.9	19.4	22.9	24.8	24.9	22.5	17.4	10.7	5.1	14.9
	մ.ն.	-6.9	-6.2	-2.5	2.4	6.3	9.6	13.3	12.8	8.9	3.7	-1.0	-4.7	3.0
27. Տաշիր	մ.ա.	1.9	2.5	6.1	12.2	16.6	19.7	22.1	22.3	19.2	14.7	8.8	4.1	12.5
	մ.ն.	-10.2	-9.3	-5.4	0.2	4.5	7.5	10.5	9.8	6.1	1.6	-3.1	-7.8	0.4
28. Քաջարան	մ.ա.	2.3	2.9	6.3	12.2	16.4	20.9	23.3	22.9	19.7	14.2	8.4	3.9	12.8
	մ.ն.	-6.6	-6.3	-3.0	2.3	6.3	10.1	13.0	12.7	9.4	4.4	-0.5	-4.7	3.1
29. Ֆանտան	մ.ա.	-2.1	-0.6	3.8	10.8	16.4	21.0	24.8	25.5	21.6	14.2	6.6	0.4	11.9
	մ.ն.	-9.1	-8.1	-4.0	1.8	6.1	9.3	12.6	12.7	9.1	4.3	-1.0	-6.4	2.3

Աղյուսակ 4 **Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը**

Բնակավայրի անվանումը	**ա/ն**	**ըստ ամիսների, ˚C**												**Տարեկան**
		Հունվար	**Փետրվար**	**Մարտ**	**Ապրիլ**	**Մայիս**	**Հունիս**	**Հուլիս**	**Օգոստոս**	**Սեպտեմբեր**	**Հոկտեմբեր**	**Նոյեմբեր**	**Դեկտեմբեր**	
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**	**13**	**14**	**15**
1. Ամասիա	ա	9.5	13.8	16.9	22.6	25.6	29.5	33.3	34.6	31.5	24.6	18.5	12.9	34.6
	ն	-31.1	-29.0	-25.9	-21.8	-6.7	-3.2	1.9	1.2	-5.4	-12.2	-21.5	-24.9	-31.1
2. Աշտարակ	ա	12.8	17.5	24.4	32.5	32.2	39.0	41.0	41.2	38.0	31.0	24.0	19.5	41.2
	ն	-24.5	-21.8	-15.0	-9.0	0.9	4.8	6.8	9.5	3.0	-4.0	-12.3	-21.5	-24.5
3. Ապարան	ա	9.4	9.1	17.8	24.1	25.7	29.5	33.4	33.2	30.2	24.8	17.5	16.0	33.4
	ն	-34.2	-33.5	-30.1	-24.7	-6.9	-3.3	1.9	-0.6	-6.5	-17.2	-24.6	-31.9	-34.2
4. Արարատ	ա	18.9	21.0	27.8	34.5	35.3	39.5	42.6	42.2	39.3	32.2	26.4	21.9	42.6
	ն	-29.7	-29.2	-23.0	-6.2	1.5	5.5	8.7	7.3	1.6	-4.7	-12.5	-31.6	-31.6
5. Արթիկ	ա	10.4	12.0	20.0	25.6	26.5	32.0	35.0	35.9	32.8	26.1	19.6	15.9	35.9
	ն	-26.3	-24.0	-25.9	-15.2	-6.0	-2.6	2.5	1.9	-4.0	-10.3	-18.6	-23.4	-26.3

4 աղյուսակի շարունակություն

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
6. Արմավիր	ա	17.9	21.0	28.5	33.0	35.0	38.8	41.5	40.5	37.8	35.0	24.5	19.6	41.5
	ն	-31.4	-31.0	-22.7	-9.6	0.3	3.1	7.3	7.4	-2.0	-6.6	-17.3	-30.0	-31.4
7. Արտաշատ	ա	19.5	21.8	27.9	33.7	35.1	39.3	42.6	41.4	39.3	32.1	25.1	22.1	42.6
	ն	-28.9	-28.7	-27.2	-9.0	-0.6	3.3	4.5	8.0	-0.2	-5.5	-16.0	-27.3	-28.9
8. Գավառ	ա	10.4	11.9	19.3	25.1	26.5	30.5	32.7	34.1	31.1	24.5	18.5	14.0	34.1
	ն	-33.0	-32.7	-30.9	-22.2	-15.2	-4.8	-1.5	-2.2	-5.8	-21.2	-27.2	-29.6	-33.0
9. Գյումրի	ա	9.2	14.0	21.5	26.8	29.3	33.1	38.0	37.0	35.1	27.4	20.2	17.6	38.0
	ն	-36.0	-35.0	-27.7	-16.0	-7.6	-3.6	0.3	1.9	-3.7	-12.5	-23.0	-30.0	-36.0
10. Գորիս	ա	21.2	19.4	25.5	29.9	31.8	32.7	34.4	35.4	32.8	31.9	27.0	22.5	35.4
	ն	-20.4	-19.0	-17.8	-11.0	-2.2	0.5	5.3	5.8	-0.7	-8.6	-13.3	-18.1	-20.4
11. Դիլիջան	ա	19.4	19.1	25.3	30.0	31.6	34.7	35.5	38.1	35.7	31.4	25.7	21.8	38.1
	ն	-22.8	-21.7	-19.3	-11.8	-4.6	0.0	4.5	3.0	-2.1	-9.5	-15.3	-19.5	-22.8
12. Եղվարդ	ա	13.1	16.0	22.2	28.5	29.8	36.5	38.3	38.7	35.4	30.2	21.5	17.4	38.7
	ն	-32.6	-25.3	-21.0	-13.4	-3.0	-0.2	5.3	6.1	0.1	-6.7	-18.6	-25.0	-32.6

4 աղյուսակի շարունակություն

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
13. Երևան «Ագրո»	ա	18.4	19.6	27.5	33.7	34.0	38.6	41.6	41.3	38.2	31.9	23.6	21.0	41.6
	ն	-30.1	-26.2	-25.2	-10.9	-0.5	2.4	8.1	7.0	1.0	-5.7	-16.4	-28.3	-30.1
14. Երևան «Արաբկիր»	ա	17.2	18.6	25.3	33.0	34.1	38.4	41.0	41.9	38.0	30.5	23.5	21.4	41.9
	ն	-20.6	-19.0	-16.4	-8.3	1.0	2.1	7.3	8.6	2.6	-3.9	-9.8	-20.0	-20.6
15. Թալին	ա	13.1	15.0	20.1	25.8	33.0	32.4	37.5	36.1	35.6	27.8	23.4	13.6	37.5
	ն	-26.1	-23.2	-21.1	-14.6	-3.2	-0.5	3.4	5.0	-0.2	-9.3	-18.2	-25.3	-26.1
16. Իջևան	ա	23.0	23.0	29.0	34.5	31.5	36.0	38.5	39.0	34.7	31.5	28.5	26.0	39.0
	ն	-17.6	-18.5	-13.1	-8.0	-0.1	2.0	8.8	9.3	2.1	-4.2	-11.3	-15.9	-18.5
17. Ծաղկահովիտ	ա	6.5	9.0	17.5	23.2	24.9	28.2	32.7	33.0	31.2	24.1	16.0	14.6	33.0
	ն	-27.8	-31.0	-26.5	-20.2	-6.4	-2.3	0.2	-1.0	-4.6	-14.2	-24.0	-30.3	-31.0
18. Կապան	ա	22.9	25.6	31.6	35.5	35.5	42.4	39.1	39.5	38.4	33.5	29.5	25.9	42.4
	ն	-22.1	-19.0	-15.7	-9.7	-0.3	2.2	9.0	8.3	0.1	-5.8	-15.0	-17.5	-22.1
19. Հրազդան	ա	8.2	12.0	20.0	26.1	29.0	31.0	35.0	35.0	33.0	25.9	20.0	15.1	35.0
	ն	-31.5	-31.0	-29.5	-17.5	-6.7	-2.1	2.2	1.2	-4.0	-13.8	-22.2	-27.7	-31.5

4 աղյուսակի շարունակություն

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
20. Մարտունի	ա	10.5	11.5	18.4	25.1	27.6	30.0	33.3	33.6	30.6	23.7	19.5	15.0	33.6
	ն	-28.4	-31.7	-27.4	-17.6	-10.0	-4.1	-0.1	2.0	-4.2	-12.1	-16.6	-20.5	-31.7
21. Մեղրի	ա	22.9	24.6	31.6	35.6	38.6	41.1	43.7	42.2	39.9	34.8	30.1	26.3	43.7
	ն	-18.0	-14.2	-10.9	-3.0	1.6	4.1	10.8	10.9	2.0	-4.1	-7.0	-13.9	-18.0
22. Ջերմուկ	ա	11.7	11.7	17.0	24.2	26.2	29.6	31.9	33.8	31.0	24.2	16.9	14.7	33.8
	ն	-28.2	-29.0	-30.0	-19.8	-7.8	-2.9	-1.0	0.9	-4.7	-12.9	-20.0	-25.3	-30.0
23. Սևան լճային	ա	9.3	8.7	17.2	23.8	24.5	30.0	31.9	32.9	30.0	25.6	20.5	13.1	32.9
	ն	-24.8	-32.5	-27.6	-14.5	-4.8	-0.1	1.4	5.1	-1.0	-8.7	-15.0	-16.6	-32.5
24. Սիսիան	ա	15.2	16.3	22.1	27.0	29.5	33.0	36.2	36.0	35.4	28.4	22.5	19.2	36.2
	ն	-34.4	-31.0	-28.9	-18.2	-6.2	-1.2	1.3	1.0	-3.8	-14.7	-25.6	-29.9	-34.4
25. Ստեփանավան	ա	17.3	19.0	23.7	27.8	30.0	31.1	35.3	36.8	33.1	30.1	23.2	18.7	36.8
	ն	-27.1	-28.0	-25.3	-17.5	-7.1	-2.9	2.4	0.4	-4.6	-13.9	-23.3	-30.7	-30.7
26. Վանաձոր	ա	15.1	17.5	24.4	29.4	31.4	33.5	37.0	36.1	34.4	30.1	22.5	19.9	37.0
	ն	-28.8	-29.8	-26.2	-11.7	-3.5	-0.2	3.4	0.9	-2.9	-12.0	-22.4	-22.9	-29.8

4 աղյուսակի շարունակություն

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
27. Տաշիր	ա	16.0	17.3	23.3	26.1	29.3	30.4	34.6	33.7	32.2	28.4	22.5	19.1	34.6
	ն	-33.6	-31.5	-30.3	-19.4	-7.0	-4.5	0.1	-2.0	-8.2	-15.9	-27.4	-34.1	-34.1
28. Քաջարան	ա	15.8	17.1	21.6	26.8	29.0	33.5	35.0	33.6	34.0	26.2	22.3	18.2	35.0
	ն	-24.0	-19.8	-18.2	-12.4	-4.2	0.5	4.9	3.7	-0.7	-9.5	-14.1	-18.0	-24.0
29. Ֆանտան	ա	7.7	10.0	20.0	26.0	27.0	31.0	35.5	35.5	34.4	27.0	17.6	15.2	35.5
	ն	-23.0	-23.1	-21.6	-15.0	-4.2	-2.0	2.1	1.9	-2.0	-11.8	-16.1	-21.5	-23.1

Աղյուսակ 5 **Ձմռան (≤ 0°C) սկիզբը, վերջը**

Բնակավայրի անվանումը	**Սկիզբ**	**Վերջ**
1	**2**	**3**
1. Ամասիա	20 նոյեմբեր	28 մարտ
2. Աշտարակ	16 դեկտեմբեր	15 փետրվար
3. Ապարան	16 նոյեմբեր	28 մարտ
4. Արարատ	16 դեկտեմբեր	13 փետրվար
5. Արթիկ	25 նոյեմբեր	21 մարտ
6. Արմավիր	10 դեկտեմբեր	19 փետրվար
7. Արտաշատ	15 դեկտեմբեր	16 փետրվար
8. Գավառ	20 նոյեմբեր	27 մարտ
9. Գյումրի	24 նոյեմբեր	18 մարտ
10. Գորիս	9 հունվար	12 փետրվար
11. Դիլիջան	19 դեկտեմբեր	25 փետրվար

5 աղյուսակի շարունակություն

1	2	3
12. Եղվարդ	10 դեկտեմբեր	2 մարտ
13. Երևան «Ագրո»	11 դեկտեմբեր	18 փետրվար
14. Երևան «Արաբկիր»	16 դեկտեմբեր	14 փետրվար
15. Թալին	30 նոյեմբեր	9 մարտ
16. Իջևան		
17. Ծաղկահովիտ	12 նոյեմբեր	31 մարտ
18. Կապան		
19. Հրազդան	22 նոյեմբեր	27 մարտ
20. Մարտունի	30 նոյեմբեր	23 մարտ
21. Մեղրի		
22. Ջերմուկ	20 նոյեմբեր	28 մարտ
23. Սևան լճային	28 նոյեմբեր	27 մարտ
24. Սիսիան	30 նոյեմբեր	8 մարտ
25. Ստեփանավան	4 դեկտեմբեր	8 մարտ

5 աղյուսակի շարունակություն

1	2	3
26. Վանաձոր	11 դեկտեմբեր	27 փետրվար
27. Տաշիր	29 նոյեմբեր	20 մարտ
28. Քաջարան	4 դեկտեմբեր	8 մարտ
29. Ֆանտան	27 նոյեմբեր	21 մարտ

Աղյուսակ 6 **Նշված սահմաններում օդի միջին օրական ջերմաստիճանով օրերի քանակը**

Ջերմաստիճանների սահմանները					**Հունվար**	**Փետրվար**	**Մարտ**	**Ապրիլ**	**Մայիս**	**Հունիս**	**Հուլիս**	**Օգոստոս**	**Սեպտեմբեր**	**Հոկտեմբեր**	**Նոյեմբեր**	**Դեկտեմբեր**
ջերմաստիճանային միջակայք, T, ˚C					**1**	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**
Ամսիա																
1.	-24.9	-ից	մինչև	-20.0	0.2	0.1										0.01
2.	-19.9	-ից	մինչև	-15.0	2.3	1.4	0.1								0.01	1.0
3.	-14.9	-ից	մինչև	-10.0	8.9	6.4	2.2	0.05							0.4	4.7
4.	-9.9	-ից	մինչև	-5.0	12.5	10.9	7.0	0.4						0.1	2.6	10.0
5.	-4.9	-ից	մինչև	0.0	6.6	8.3	13.0	3.7	0.1				0.01	1.2	8.6	12.3
6.	0.1	-ից	մինչև	5.0	0.2	0.9	7.7	13.5	2.4	0.2			0.4	7.6	15.4	2.7
7.	5.1	-ից	մինչև	10.0		0.01	0.6	10.4	15.3	4.0	0.3	0.2	6.2	16.6	2.6	0.01
8.	10.1	-ից	մինչև	15.0			0.01	1.7	12.4	17.6	9.0	8.4	15.9	5.3	0.01	
9.	15.1	-ից	մինչև	20.0					0.7	7.7	18.5	19.2	7.1	0.1		
10.	20.1	-ից	մինչև	25.0						0.1	3.0	3.0	0.2			
11.	25.1	-ից	մինչև	30.0							0.01	0.02				

6 աղյուսակի շարունակություն

ջերմաստիճանային միջակայք, T, ˚C												
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Աշտարակ													
12.	-19.9 -ից մինչև -15.0	0.3											0.2
13.	-14.9 -ից մինչև -10.0	2.7	0.3										0.9
14.	-9.9 -ից մինչև -5.0	7.4	4.6	0.1								0.02	3.1
15.	-4.9 -ից մինչև 0.0	12.3	9.3	3.2	0.2							2.2	10.7
16.	0.1 -ից մինչև 5.0	7.4	10.4	8.9	0.8					0.02	0.4	8.2	13.0
17.	5.1 -ից մինչև 10.0	1.0	3.7	14.2	8.9	0.8				0.1	4.6	15.7	3.1
18.	10.1 -ից մինչև 15.0			4.4	14.7	9.6	0.8	0.1	0.02	1.8	15.2	3.7	0.05
19.	15.1 -ից մինչև 20.0			0.2	5.1	16.1	8.8	1.1	0.9	10.8	10.3	0.1	
20.	20.1 -ից մինչև 25.0				0.3	4.5	16.5	13.5	13.9	14.7	0.6		
21.	25.1 -ից մինչև 30.0						3.9	15.2	15.0	2.5	0.02		
22.	30.1 -ից մինչև 35.0						0.02	1.2	1.2	0.02			

6 աղյուսակի շարունակություն

ջերմաստիճանային միջակայք, T, ˚C					**1**	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**
Ապարան																
23.	-29.9	-ից	մինչև	-25.0	0.2	0.1										0.01
24.	-24.9	-ից	մինչև	-20.0	0.4	0.2	0.03									0.2
25.	-19.9	-ից	մինչև	-15.0	2.9	2.2	0.3								0.04	1.3
26.	-14.9	-ից	մինչև	-10.0	8.1	6.0	2.1	0.1							0.6	5.1
27.	-9.9	-ից	մինչև	-5.0	11.4	9.6	6.4	0.4						0.1	2.3	8.9
28.	-4.9	-ից	մինչև	0.0	7.5	8.9	12.3	2.9						0.9	9.0	11.9
29.	0.1	-ից	մինչև	5.0	0.6	1.4	8.9	13.0	1.7	0.03			0.2	7.7	14.7	3.5
30.	5.1	-ից	մինչև	10.0			1.0	11.9	15.0	3.1	0.2	0.04	5.3	18.1	3.0	0.1
31.	10.1	-ից	մինչև	15.0			0.03	1.8	13.6	17.9	6.8	6.6	17.4	4.2	0.03	
32.	15.1	-ից	մինչև	20.0				0.1	0.7	8.9	20.0	20.9	6.9	0.03		
33.	20.1	-ից	մինչև	25.0						0.1	4.0	3.5	0.2			

6 աղյուսակի շարունակություն

ջերմաստիճանային միջակայք, T, ˚C					1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Արարատ																
34.	-24.9	-ից	մինչև	-20.0	0.1											0.05
35.	-19.9	-ից	մինչև	-15.0	0.9	0.2										0.1
36.	-14.9	-ից	մինչև	-10.0	2.5	0.7	0.1									0.7
37.	-9.9	-ից	մինչև	-5.0	5.6	2.7	0.2									2.5
38.	-4.9	-ից	մինչև	0.0	12.9	9.0	1.5	0.02							1.7	10.9
39.	0.1	-ից	մինչև	5.0	7.5	10.8	7.6	0.4						0.3	9.1	13.0
40.	5.1	-ից	մինչև	10.0	1.2	4.6	14.6	4.5	0.1				0.03	3.8	14.4	3.1
41.	10.1	-ից	մինչև	15.0	0.2	0.3	6.6	15.6	4.7	0.3			0.8	15.8	4.3	0.2
42.	15.1	-ից	մինչև	20.0			0.5	8.8	17.9	5.7	0.4	0.5	10.2	10.6	0.2	0.02
43.	20.1	-ից	մինչև	25.0				0.7	8.1	17.0	7.8	9.6	16.2	0.5		
44.	25.1	-ից	մինչև	30.0				0.03	0.2	7.0	20.4	19.7	2.8			
45.	30.1	-ից	մինչև	35.0						0.1	2.3	1.2				

6 աղյուսակի շարունակություն

ջերմաստիճանային միջակայք, T, ˚C					**1**	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**
Արթիկ																
46.	-24.9	-ից	մինչև	-20.0	0.03											
47.	-19.9	-ից	մինչև	-15.0	1.2	0.5	0.04								0.03	0.4
48.	-14.9	-ից	մինչև	-10.0	6.4	4.8	0.9	0.01							0.2	2.9
49.	-9.9	-ից	մինչև	-5.0	12.2	9.8	4.7	0.2						0.03	1.4	8.3
50.	-4.9	-ից	մինչև	0.0	8.5	9.5	10.4	1.6	0.01	0.1			0.1	0.6	6.5	12.0
51.	0.1	-ից	մինչև	5.0	1.7	2.9	11.2	9.2	1.0	0.1			0.1	4.6	14.1	5.8
52.	5.1	-ից	մինչև	10.0	0.03	0.2	2.8	13.6	10.2	1.5	0.1		2.9	14.8	6.7	0.5
53.	10.1	-ից	մինչև	15.0		0.01	0.2	4.9	16.3	14.0	3.4	3.5	13.0	9.9	0.2	
54.	15.1	-ից	մինչև	20.0				0.2	2.9	12.6	17.5	17.5	11.4	0.6		
55.	20.1	-ից	մինչև	25.0						1.4	8.7	9.3	1.8			
56.	25.1	-ից	մինչև	30.0							0.2	0.2				

6 աղյուսակի շարունակություն

ջերմաստիճանային միջակայք, T, ˚C					**1**	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**
Արմավիր																
57.	-24.9	-ից	մինչև	-20.0	0.2	0.1										0.04
58.	-19.9	-ից	մինչև	-15.0	1.2	0.6	0.02									0.3
59.	-14.9	-ից	մինչև	-10.0	3.2	1.2	0.1								0.04	1.1
60.	-9.9	-ից	մինչև	-5.0	7.2	4.1	0.5								0.2	3.8
61.	-4.9	-ից	մինչև	0.0	12.6	10.1	3.2	0.03							2.0	11.3
62.	0.1	-ից	մինչև	5.0	6.1	9.3	9.8	0.8						0.5	9.9	12.3
63.	5.1	-ից	մինչև	10.0	0.5	2.8	13.2	6.2	0.2				0.03	5.3	14.0	2.1
64.	10.1	-ից	մինչև	15.0	0.02	0.1	4.0	16.1	6.5	0.5	0.02		1.7	17.0	3.4	0.1
65.	15.1	-ից	մինչև	20.0			0.2	6.4	18.0	7.4	0.5	0.7	12.7	7.9	0.1	
66.	20.1	-ից	մինչև	25.0				0.4	6.3	17.5	10.7	13.3	13.8	0.2		
67.	25.1	-ից	մինչև	30.0					0.1	4.6	18.4	16.4	1.6			
68.	30.1	-ից	մինչև	35.0						0.02	1.3	0.6				

6 աղյուսակի շարունակություն

ջերմաստիճանային միջակայք, T, ˚C					1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Արտաշատ																
69.	-24.9	-ից	մինչև	-20.0	0.1	0.1										0.1
70.	-19.9	-ից	մինչև	-15.0	1.0	0.5										0.2
71.	-14.9	-ից	մինչև	-10.0	2.6	1.1	0.1								0.01	1.0
72.	-9.9	-ից	մինչև	-5.0	6.4	3.2	0.2								0.2	3.2
73.	-4.9	-ից	մինչև	0.0	12.8	9.8	2.8	0.03							1.8	10.8
74.	0.1	-ից	մինչև	5.0	6.7	9.5	8.8	0.6						0.5	9.3	12.6
75.	5.1	-ից	մինչև	10.0	0.9	3.5	13.5	5.3	0.2				0.1	5.0	14.4	2.6
76.	10.1	-ից	մինչև	15.0	0.1	0.2	4.9	16.1	5.7	0.5	0.04		1.8	17.4	3.8	0.1
77.	15.1	-ից	մինչև	20.0			0.3	7.5	18.7	7.6	0.5	0.8	13.1	7.6	0.1	
78.	20.1	-ից	մինչև	25.0			0.01	0.4	6.4	17.9	11.4	15.1	13.5	0.2		
79.	25.1	-ից	մինչև	30.0				0.01	0.04	4.1	18.0	14.2	1.2			
80.	30.1	-ից	մինչև	35.0							0.6	0.5	0.01			

6 աղյուսակի շարունակություն

ջերմաստիճանային միջակայք, T, ˚C					1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Գավառ																
81.	-29.9	-ից	մինչև	-25.0	0.01	0.01										
82.	-24.9	-ից	մինչև	-20.0	0.1	0.2	0.1									0.01
83.	-19.9	-ից	մինչև	-15.0	1.5	1.4	0.3								0.1	0.6
84.	-14.9	-ից	մինչև	-10.0	6.8	4.9	1.6	0.05						0.01	0.4	3.5
85.	-9.9	-ից	մինչև	-5.0	12.3	9.5	5.9	0.2						0.1	2.5	9.4
86.	-4.9	-ից	մինչև	0.0	8.6	9.6	11.8	3.4	0.04					0.8	8.6	12.0
87.	0.1	-ից	մինչև	5.0	1.6	2.6	10.0	13.5	2.2	0.1			0.3	7.6	14.4	5.1
88.	5.1	-ից	մինչև	10.0		0.1	1.3	11.3	16.2	3.5	0.2	0.2	6.8	18.1	3.9	0.3
89.	10.1	-ից	մինչև	15.0			0.1	1.3	11.8	19.6	9.6	9.3	18.0	4.4	0.1	
90.	15.1	-ից	մինչև	20.0				0.1	0.6	6.5	20.3	20.7	4.9	0.03		
91.	20.1	-ից	մինչև	25.0						0.1	0.9	0.8	0.03			

6 աղյուսակի շարունակություն

ջերմաստիճանային միջակայք, T, ˚C					1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Գյումրի																
92.	-29.9	-ից	մինչև	-25.0	0.03											
93.	-24.9	-ից	մինչև	-20.0	0.6	0.4										0.2
94.	-19.9	-ից	մինչև	-15.0	3.6	2.3	0.1								0.03	1.4
95.	-14.9	-ից	մինչև	-10.0	7.9	5.4	1.0								0.3	4.1
96.	-9.9	-ից	մինչև	-5.0	9.9	8.5	3.6	0.1							1.4	7.9
97.	-4.9	-ից	մինչև	0.0	7.1	8.7	9.2	0.6						0.4	6.8	11.5
98.	0.1	-ից	մինչև	5.0	1.7	3.0	13.6	7.6	0.4	0.02			0.03	3.4	15.4	5.9
99.	5.1	-ից	մինչև	10.0		0.1	3.3	16.0	8.2	0.7	0.02		1.4	15.1	5.9	0.2
100.	10.1	-ից	մինչև	15.0			0.2	5.6	18.5	10.8	1.4	1.5	11.7	11.3	0.1	
101.	15.1	-ից	մինչև	20.0				0.2	3.9	16.0	14.8	15.1	14.0	0.8		
102.	20.1	-ից	մինչև	25.0					0.03	2.5	14.1	13.8	2.9			
103.	25.1	-ից	մինչև	30.0							0.8	0.6	0.1			

6 աղյուսակի շարունակություն

ջերմաստիճանային միջակայք, T, ˚C					**1**	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**
Գորիս																
104.	-19.9	-ից	մինչև	-15.0	0.02	0.01										
105.	-14.9	-ից	մինչև	-10.0	0.6	0.6	0.05									0.2
106.	-9.9	-ից	մինչև	-5.0	4.6	3.9	1.5	0.01							0.5	2.9
107.	-4.9	-ից	մինչև	0.0	11.8	9.4	7.7	1.2						0.3	3.3	9.0
108.	0.1	-ից	մինչև	5.0	9.4	8.8	10.8	5.9	0.6	0.04			0.1	3.2	10.2	10.8
109.	5.1	-ից	մինչև	10.0	4.4	5.1	8.2	11.4	5.7	0.7		0.1	2.4	11.5	11.5	6.9
110.	10.1	-ից	մինչև	15.0	0.3	0.5	2.3	9.6	16.5	7.9	1.9	2.7	12.4	13.2	4.3	1.2
111.	15.1	-ից	մինչև	20.0			0.2	1.8	8.0	17.5	16.3	18.0	13.8	2.4	0.3	0.04
112.	20.1	-ից	մինչև	25.0				0.1	0.3	3.5	12.2	10.1	1.0			
113.	25.1	-ից	մինչև	30.0						0.02	0.1	0.05				

6 աղյուսակի շարունակություն

ջերմաստիճանային միջակայք, T, ˚C					**1**	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**
Դիլիջան																
114.	-19.9	-ից	մինչև	-15.0		0.02										
115.	-14.9	-ից	մինչև	-10.0	0.8	0.6	0.04								0.01	0.2
116.	-9.9	-ից	մինչև	-5.0	4.7	3.9	1.3	0.01							0.6	3.1
117.	-4.9	-ից	մինչև	0.0	12.9	10.4	7.4	0.7						0.2	3.5	10.0
118.	0.1	-ից	մինչև	5.0	9.9	10.0	13.1	6.3	0.3				0.1	3.5	12.4	12.5
119.	5.1	-ից	մինչև	10.0	1.7	2.5	7.8	14.0	6.8	0.7	0.01		2.1	13.6	11.4	4.0
120.	10.1	-ից	մինչև	15.0		0.05	0.9	7.9	19.3	12.3	2.6	3.0	15.3	12.6	1.8	0.3
121.	15.1	-ից	մինչև	20.0			0.1	0.6	4.0	15.3	18.6	21.2	11.5	0.8	0.02	
122.	20.1	-ից	մինչև	25.0					0.04	1.5	9.2	6.4	0.6	0.01		
123.	25.1	-ից	մինչև	30.0							0.01					

6 աղյուսակի շարունակություն

ջերմաստիճանային միջակայք, T, ˚C					**1**	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**
Եղվարդ																
124.	-24.9	-ից	մինչև	-20.0	0.1											
125.	-19.9	-ից	մինչև	-15.0	0.4	0.3										0.3
126.	-14.9	-ից	մինչև	-10.0	3.7	2.3	0.04								0.1	1.3
127.	-9.9	-ից	մինչև	-5.0	8.8	6.1	1.3								0.4	4.5
128.	-4.9	-ից	մինչև	0.0	11.8	9.8	6.3	0.2						0.1	2.7	10.3
129.	0.1	-ից	մինչև	5.0	5.3	8.0	12.8	3.0	0.1					1.3	10.2	12.6
130.	5.1	-ից	մինչև	10.0	0.1	0.7	9.1	13.6	2.0	0.2			0.2	7.4	14.8	1.4
131.	10.1	-ից	մինչև	15.0			1.1	11.3	15.3	2.8	0.1	0.1	4.4	15.8	1.5	0.02
132.	15.1	-ից	մինչև	20.0				1.5	12.7	15.3	4.2	3.7	14.4	5.8	0.02	
133.	20.1	-ից	մինչև	25.0				0.04	0.7	10.8	18.8	20.1	10.1	0.1		
134.	25.1	-ից	մինչև	30.0						0.6	7.3	6.7	0.5			

6 աղյուսակի շարունակություն

ջերմաստիճանային միջակայք, T, ˚C					1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Երևան «Ագրո»																
135.	-24.9	-ից	մինչև	-20.0	0.1	0.01										0.1
136.	-19.9	-ից	մինչև	-15.0	1.2	0.4	0.1									0.3
137.	-14.9	-ից	մինչև	-10.0	3.6	1.2	0.1								0.01	1.0
138.	-9.9	-ից	մինչև	-5.0	6.7	4.3	0.3								0.2	4.0
139.	-4.9	-ից	մինչև	0.0	12.1	9.6	2.7	0.1							2.4	10.9
140.	0.1	-ից	մինչև	5.0	6.2	9.4	9.6	0.6						0.6	9.9	12.2
141.	5.1	-ից	մինչև	10.0	0.9	3.4	13.5	6.9	0.5				0.1	5.2	13.7	2.4
142.	10.1	-ից	մինչև	15.0	0.04	0.1	4.6	15.7	7.2	0.5	0.03		1.5	14.9	3.6	0.1
143.	15.1	-ից	մինչև	20.0			0.3	6.3	17.1	7.5	1.0	0.9	10.4	9.6	0.1	
144.	20.1	-ից	մինչև	25.0				0.4	6.2	16.4	10.8	11.6	14.8	0.7		
145.	25.1	-ից	մինչև	30.0				0.03	0.1	5.4	17.1	17.0	3.2			
146.	30.1	-ից	մինչև	35.0						0.1	2.1	1.5	0.04			

6 աղյուսակի շարունակություն

ջերմաստիճանային միջակայք, T, ˚C					1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Երևան «Արաբկիր»																
147.	-19.9	-ից	մինչև	-15.0	0.1	0.02										0.1
148.	-14.9	-ից	մինչև	-10.0	2.3	0.7	0.1									0.5
149.	-9.9	-ից	մինչև	-5.0	7.6	4.0	0.3								0.03	3.4
150.	-4.9	-ից	մինչև	0.0	11.8	10.2	2.9	0.1							1.9	10.1
151.	0.1	-ից	մինչև	5.0	7.8	9.1	9.1	0.9						0.4	7.8	12.8
152.	5.1	-ից	մինչև	10.0	1.3	4.1	13.6	8.0	0.9	0.05			0.1	4.4	15.1	3.9
153.	10.1	-ից	մինչև	15.0	0.03	0.2	4.7	14.9	9.0	1.0	0.1	0.02	1.9	14.6	5.1	0.2
154.	15.1	-ից	մինչև	20.0			0.3	5.7	16.2	9.3	1.3	1.5	11.0	10.7	0.1	
155.	20.1	-ից	մինչև	25.0				0.4	4.9	15.5	14.1	15.0	14.6	0.8		
156.	25.1	-ից	մինչև	30.0				0.02		4.1	14.6	13.6	2.3			
157.	30.1	-ից	մինչև	35.0						0.03	0.9	0.9	0.02			

6 աղյուսակի շարունակություն

	ջերմաստիճանային միջակայք, T, ˚C				**1**	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**
Թալին																
158.	-24.9	-ից	մինչև	-20.0	0.01											0.01
159.	-19.9	-ից	մինչև	-15.0	0.6	0.2	0.04									0.2
160.	-14.9	-ից	մինչև	-10.0	4.6	2.9	0.3								0.04	2.1
161.	-9.9	-ից	մինչև	-5.0	11.0	8.8	2.8	0.1							1.1	7.4
162.	-4.9	-ից	մինչև	0.0	11.8	10.5	8.4	0.7						0.2	4.9	12.3
163.	0.1	-ից	մինչև	5.0	2.4	5.1	13.3	6.3	0.4	0.01			0.05	2.5	13.2	8.5
164.	5.1	-ից	մինչև	10.0	0.1	0.3	5.1	15.6	6.7	0.6	0.04		0.8	12.5	10.1	0.4
165.	10.1	-ից	մինչև	15.0			0.3	6.4	17.7	8.3	0.8	0.6	8.4	13.3	0.6	0.01
166.	15.1	-ից	մինչև	20.0				0.4	5.8	16.5	11.7	10.3	15.6	2.4		
167.	20.1	-ից	մինչև	25.0					0.1	4.5	16.1	18.3	4.9			
168.	25.1	-ից	մինչև	30.0						0.01	2.2	1.7	0.05			

6 աղյուսակի շարունակություն

ջերմաստիճանային միջակայք, T, ˚C					**1**	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**
Իջևան																
169.	-14.9	-ից	մինչև	-10.0	0.2	0.1										0.01
170.	-9.9	-ից	մինչև	-5.0	2.1	1.5	0.2								0.1	0.9
171.	-4.9	-ից	մինչև	0.0	11.0	8.6	3.6	0.1						0.02	1.3	6.9
172.	0.1	-ից	մինչև	5.0	11.8	11.4	11.9	2.6	0.04					0.8	8.6	14.0
173.	5.1	-ից	մինչև	10.0	4.5	4.9	11.0	10.6	1.7	0.04			0.3	7.8	14.0	6.9
174.	10.1	-ից	մինչև	15.0	1.2	1.4	3.6	12.9	12.9	2.9	0.2	0.3	6.5	16.1	5.4	2.1
175.	15.1	-ից	մինչև	20.0	0.02	0.04	0.5	3.6	15.2	16.6	7.1	7.8	16.2	6.0	0.5	0.1
176.	20.1	-ից	մինչև	25.0			0.02	0.1	1.0	10.0	20.2	19.8	6.7	0.1	0.01	0.01
177.	25.1	-ից	մինչև	30.0						0.3	3.5	3.0	0.1			

6 աղյուսակի շարունակություն

ջերմաստիճանային միջակայք, T, ˚C					**1**	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**
Ծաղկահովիտ																
178.	-24.9	-ից	մինչև	-20.0	0.1	0.2										0.1
179.	-19.9	-ից	մինչև	-15.0	2.8	1.7	0.4								0.1	1.2
180.	-14.9	-ից	մինչև	-10.0	9.2	7.0	2.1	0.1							1.1	6.6
181.	-9.9	-ից	մինչև	-5.0	12.4	10.8	6.6	0.4						0.1	3.4	10.1
182.	-4.9	-ից	մինչև	0.0	6.1	7.2	12.4	4.1	0.1					1.2	10.4	9.6
183.	0.1	-ից	մինչև	5.0	0.5	1.4	8.5	14.6	4.5	0.1			0.6	9.8	13.2	3.3
184.	5.1	-ից	մինչև	10.0			1.0	9.8	17.9	5.8	0.6	0.4	8.9	17.2	1.8	0.1
185.	10.1	-ից	մինչև	15.0			0.1	1.0	8.1	19.9	14.3	12.8	16.5	2.6		
186.	15.1	-ից	մինչև	20.0				0.1	0.4	4.1	15.0	16.7	4.0			
187.	20.1	-ից	մինչև	25.0						0.03	1.1	1.1	0.03			

6 աղյուսակի շարունակություն

ջերմաստիճանային միջակայք, T, ˚C					1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Կապան																
188.	-19.9	-ից	մինչև	-15.0	0.02											
189.	-14.9	-ից	մինչև	-10.0	0.2	0.1										0.1
190.	-9.9	-ից	մինչև	-5.0	2.3	1.3	0.2								0.05	1.0
191.	-4.9	-ից	մինչև	0.0	10.0	6.7	2.6	0.1						0.01	0.9	6.4
192.	0.1	-ից	մինչև	5.0	14.2	12.9	10.3	2.0	0.04					0.6	6.9	15.6
193.	5.1	-ից	մինչև	10.0	3.6	6.6	12.6	8.1	0.9	0.04			0.1	5.2	15.8	7.1
194.	10.1	-ից	մինչև	15.0	0.2	0.7	4.9	14.4	8.7	1.2	0.1	0.2	3.7	16.8	6.2	0.8
195.	15.1	-ից	մինչև	20.0	0.02		0.4	5.3	18.2	10.7	2.7	3.4	15.1	8.3	0.2	0.02
196.	20.1	-ից	մինչև	25.0			0.04	0.1	3.1	16.8	18.9	20.7	10.8	0.2		
197.	25.1	-ից	մինչև	30.0						1.2	9.4	6.7	0.2			

6 աղյուսակի շարունակություն

